Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարեր (2024-2025 ուստարի)

(Տևողությունը 3 ժամ)

9-րդ դասարան

1. Գրի՛ր հայերենի առաջին ուսուցչի նշանավոր աշակերտներից որևէ մեկի մասին: Նրացից ովքե՞ր են անմահացրել իրենց ուսուցչին:

10 միավոր

2.Բնութագրի՛ր Տիգրանուհուն՝ որպես առաջին վիպական, պատմագեղարվեստական կերպարի: Արժևորիր նրա դերը Տիգրանի հաղթանակի գործում: Ո՞ր պատմիչն է մեզ ավանդել այս հրաշալի վիպերգը:

10 միավոր

3. Ի՞նչ գիտես էպոսի մասին: Ովքե՞ր են մշակել «Սասնա ծռեր» էպոսը: Ո՞ր հեղինակի մշակմանն ես ծանոթ. ի՞նչ հարցեր է քննում հեղինակը:

10 միավոր

4. Ի՞նչ գիտես Մուրացանի մասին: Ինչո՞ւ է ընտրել գրական այս կեղծանունը: Ե՞րբ է գրվել «Առաքյալը» վիպակը. ինչպե՞ս ես մեկնաբանում վերնագիրը: Ի՞նչ առաքելություն ուներ հերոսը:Հավատարի՞մ մնաց իր առաքելությանը: Դու ինչպե՞ս կվարվեիր:

10 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան